



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

«ՄՈՒՂՆՈՒ ՄԵՍՐՈՊ ԱԾՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028 թթ.

Տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդ՝

Դիանա Ժիրայրի Խոջոյան

ԱՇՏԱՐԱԿ 2023

<i>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....</i>	<i>3</i>
<i>ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐ.....</i>	<i>4</i>
<i>ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....</i>	<i>6</i>
1.1 ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	8
2. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻՆ. ՀԱՄԱՅՆՔԻ, ՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.....	11
3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ և ՆԵՐՈՒԺԻՆ.....	12
4. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ.....	15
4.1 ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ.....	16
4.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ. 19	
4.3 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ 22	
4.4 ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ 25	
4.5 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ..... 28	
4.6 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ 34	
4.7 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ..... 37	
4.8 ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 39	
4.9 ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՄՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ 41	
4.10 ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ..... 45	
4.11 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 50	
4.12 ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ..... 51	
5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.....	62
6. ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ.....	64
ՎԵՐՋԱՐԱՆ.....	69
ՀԱՎԵԼ ՎԱԾ.....	70

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը կարևոր է ոչ միայն տնտեսական զարգացման, այլև սոցիալական կայունության համար: 1948 թվականի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» (հոդված 26) ճանաչում է կրթությունը այլ հիմնական կարիքների հետ մեկտեղ, ինչպիսիք են սնունդը, կացարանը և հագուստը, որպես կենսական նշանակություն մարդկային զարգացման համար: 21-րդ դարում ցանկացած երկրի զարգացումը որոշվում է նրա մարդկային կապիտալի մակարդակով և աճով: Կրթության մեջ ներդրումները մարդկային կապիտալի զարգացման հիմնական բաղադրիչներն են:

Այս ծրագիրը նպատակ ունի խթանելու նորարարություն և ստեղծագործականություն տարրական և հիմնական կրթության մեջ՝ խրախուսելու սովորողներին ուսումնառել ամեն օր և հետևողականորեն, ինչպես նաև տրամադրելու ուսուցիչներին ուղենիշ՝ զարգացման, ներառական կրթության կազմակերպման, ուսումնական պլանի և ուսումնական նյութերի մշակման, դպրոցի և կրթական համակարգի կատարելագործման համար:

Այս ծրագիրը լուծելու է հետևյալ խնդիրները՝ կրթության իրականացումը ազգային հենքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ գույքորդմամբ, նպաստել մարդու և քաղաքացու շահերին, պատրաստել մրցակցային կյանքին՝ բացահայտելով երեխայի հնարավորությունները, ծառայել անհատին ու ժողովրդին, իրականացնել ուսուցում ու դաստիարակություն միասնականության սկզբունքով՝ գերծ մնալով խտրականությունից և սահմանափակումներից:

«Մուղնու Մեսրոպ Աշնյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի այս ծրագիրը հաստատության ռազմավարական փաստաթուղթ է, որի հիման վրա պլանավորվելու է աշխատանքը հաստատությունում: Ծրագիրը կազմված է 5 տարվա համար և ընդգրկում է հետևյալ բաղադրիչները՝

1. հաստատության գործունեությունը,
2. իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը,
3. նպատակների և խնդիրների սահմանումը,
4. սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը,
5. պատասխանատուներին,
6. արդյունքների գնահատման չափանիշները,
7. ռիսկերը,
8. գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները:

ՀՀ Արագածոտնի մարզի «Մուղնու Մեսրոպ Աշնյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը կազմվել է ԿԳՄՍ նախարարի 2022թ. սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրամանով հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը» փաստաթղթի, Հանրակրթության մասին օրենքի և Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին, կրթական վերջնարդյունքներին և կարողունակություններին համապատասխան:

Վերլուծությունների համար հիմք են հանդիսացել դպրոցի գործունեության նախորդ ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունները, արտաքին և ներքին գործոնները՝ կրթական քաղաքականության միտումները, ժամանակակից կրթական պահանջները, համայնքի կարիքներն ու հնարավորությունները, ուսումնական հաստատության


առանձնահատկությունները, շահառու խմբերը, հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և այլն:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Փաստաթղթի անվանումը	ՀՀ Արագածոտնի մարզի Մուղնու Մեսրոպ Աշնյանի անվան հիմնական դպրոց-ի 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը
Իրավական հիմքերը	➤ «Կրթության մասին» ՀՀ օրենք ➤ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք ➤ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ ➤ Հանրակրթության պետական չափորոշիչ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք ➤ «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենք ➤ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք ➤ Դպրոցի կանոնադրություն
Իրականացման ժամանակահատվածը	2023-2028 թթ.
Ծրագրի նպատակը	➤ Համայնքի կարիքներին համապատասխանող կրթության բովանդակության և համապատասխան միջավայրի ապահովում՝ հենվելով կրթական արդի տեխնոլոգիաների և ոլորտի զարգացման արդի միտումների վրա, որոնք համընկնում են ազգային նկարագրին և արժեհամակարգին: - Ազգային պետականության պահանջներին համապատասխան հայ մարդու և քաղաքացու դաստիարակություն: ➤ 21-րդ դարի պահանջներին համապատասխան կրթության ապահովում: ➤ Կրթությունից դուրս մնացած երեխաների ինտեգրումը դպրոց: ➤ Բազմակարծիք, ներառակ ան, մասնակցային կրթության միջավայրի ապահովում: ➤ Մանկավարժների ինքնազարգացման, մասնագիտական կարողությունների կատարելագործում: ➤ Բուլինգի կանխարգելում: ➤ Դպրոցական արժեհամակարգի ձևավորում: ➤ Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում: ➤ Դպրոցի հեղինակության բարձրացում:
Ծրագրի խնդիրները	➤ Ստեղծել վերլուծության տարբեր գործիքների կիրառմամբ տեղեկատվական բազա՝ առաջիկա 5 տարիների

	զարգացման առաջնահերթությունները մատնանշելու և դրանցից բխող աշխատանքները կազմակերպելու համար: ➤ Մշակել կամ վերաձևակերպել ներքին նորմատիվ ակտեր՝ ապահովելու արդիականացված կրթական միջավայր, որը համապատասխանում է համայնքի և արդի կրթական պահանջներին: ➤ Նպաստել նորարարական կրթական մեթոդների ներդրմանը: ➤ Կատարելագործել դպրոց-ծնող-համայնք կապը: ➤ Համալրել, հարստացնել նյութատեխնիկական, ուսումնականության բազան: ➤ Յուրաքանչյուր աշխատակցի որակյալ, պատասխանատու և հոգատար աշխատանքի լավագույն արդյունքով ապահովել դպրոցի հեղինակությունը:
Ծրագրի ակնկալվող արդյունքները	➤ Ազգային հենքով որակյալ կրթության ապահովում: ➤ Կրթական տարբեր աստիճաններում սովորողների կողմից չափորոշչային պահանջների յուրացման ապահովում: ➤ Ուսումնադաստիարակչական գործընթացի արդիականացում՝ պետական կրթական չափորոշչին և կրթակարգին համապատասխան: ➤ Կրթության որակի բարձրացում: ➤ Կրթության մատչելիություն: ➤ Յուրաքանչյուր սովորողի հնարավորությունների բացահայտման և զարգացման համակարգի ձևավորում: ➤ Կարողունակ քաղաքացիների ձևավորում: ➤ Մանկավարժների մասնագիտական հմտությունների զարգացում: ➤ Ուսումնական հաստատության պետական-հասարակական կառավարման մակարդակի բարձրացում:
Հնարավորություններ՝ առկա ռեսուրսները	➤ Ծենքային պայմաններ: Նյութատեխնիկական բավարար բազա: ➤ Ծրագրերի, թեմատիկ և օրվա դասի պլանների հետևողական կատարում: ➤ ՏՀՏ գործիքների ամկայություն: ➤ Նորարարություններին ընդառաջ գնացող մանկավարժական և աշակերտական համակազմ: ➤ Մասնագիտական կատարելագործմամբ, ինքնակրթությամբ զբաղվելու ցանկություն ունեցող ուսուցիչներ:
Ռիսկերը	➤ Մանկավարժների ինքնազարգացմանը խանգարող սոցիալական խոչընդոտներ: ➤ Ուսուցիչների որոշակի մասի մոտ ՏՀՏ ծրագրերի իմացության և օգտագործման միջին կարողություններ: ➤ Ծնողական համայնքի կողմից դպրոցական գործունեության մասնակցության պասիվությունը: ➤ Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորությունները: ➤ Միջնարգային դպրոցների միջև կապի սակավությունը:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



Հաստատության անվանումը	«ՀՀ Արագածոտն մարզի Մուղնու Մեսրոպ Աշճյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Հաստատության հասցեն	ՀՀ Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնք, Մուղնի թաղամաս, 6-րդ փողոց, 140 շենք

Էլեկտրոնային փոստի հասցե	mughni@shools.am
Դպրոցական կայքի հասցեն	https://mughni-aragatsotn.schoolsite.am/
Ֆերուքյան սոցիալական կայքի հասցե	Մուղնու հիմնական դպրոց (Աշնյանի անվան հիմնական դպրոց)
Կազմակերպա-իրավական տեսակը	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
Դպրոցի ենթակայությունը	Մարզային
Դպրոցի լիազոր մարմինը	Արագածոտնի մարզպետարան
Դպրոցի աշխատանքային շաբաթը	Հնգօրյա
Դպրոցի աշխատանքային ժամակարգը	Միաժամանակ
Մանկավարժական խորհուրդ	21 մանկավարժ, որոնցից 1 հոգեբան, 1 ուսուցչի օգնական
Ուսուցիչների դրույքաչափը	1-ին կարգ՝ 120200, 2-րդ կարգ՝ 120000, 3-րդ կարգ՝ 119800 դրամ
Դպրոցի դասարանների թիվը	9 դասարան
Դպրոցի սովորողների թիվը	126 աշակերտ, ընդ որում՝ տարրական հանրակրթական ծրագիր՝ 50 սովորող, հիմնական հանրակրթական ծրագիր՝ 76 սովորող
Դպրոցում սովորող ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը	2
Նախակրթարան հաճախող աշակերտների թիվը	14
Դպրոցի ընդհանուր տարածքը	2590 քմ

ՀՀ Արագածոտնի մարզի Մուղնու Մեսրոպ Աշնյանի անվան հիմնական դպրոցը շահագործման է հանձնվել 1979 թվականին: Մինչ նշված շենքի շահագործումը, դպրոցը գործել է հարակից տարածքում գտնվող շինությունում և կոչվել է «Մուղնիի 8-ամյա դպրոց»: 1991թ. դպրոցը դարձել է միջնակարգ և կոչվել՝ «Աշտարակ քաղաքի Մուղնիի միջնակարգ դպրոց»: 2006թ.-ին դպրոցը կոչվել է մեծ հոգևորական արքեպիսկոպոս Մ. Աշնյանի անվամբ: 2009 թվականին դարձել է հիմնական՝ «Մուղնու Մ. Աշնյանի անվան հիմնական դպրոց»: Հիմնանորոգում է կատարվել 2007-2008 թթ-ին: 2009-2010 թթ-ին գազաֆիկացվել է, ջեռուցման համակարգը լոկալ է:

Կրթական բարեփոխումների «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում դպրոցները վերակազմավորվեցին ըստ կրթական աստիճանների: Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 07.07.2010 թ.-ի No794-Ա/Բ հրամանի՝ դպրոցին տրվեց տարրական և հիմնական կրթության ծրագրեր իրականացնելու լիցենզիա:

- Տարրական ընդհանուր /14.10.2010թ./ սովորողների քանակի 120 սահմանային տեղով Սերիա Ա №/0816
- Հիմնական ընդհանուր /14.10.2010թ./ սովորողների քանակի 200 սահմանային տեղով Սերիա Ա №/0806/
- Դպրոցի նախակրթարանը հիմնվել է 2023 թ.-ին «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակներում



Դպրոցն ունի 9 դասարան՝ 1-9-րդ, սովորողները 126-ն են: Դպրոցի բոլոր մանկավարժներն ունեն բարձրագույն կրթություն, աշխատում են իրենց որակավորմանը համապատասխան. ոչ մի առարկա չի դասավանդվում այլ մասնագիտական որակավորում ունեցող ուսուցչի կողմից: Դպրոցում գործում է առարկայական 3 մեթոդիավորում՝ «Տարրական կրթություն», «Լեզուներ և հասարակական այլ առարկաներ», «Բնագիտամաթեմատիկական և հարակից այլ առարկաներ»: Արտադպրոցական գործունեություն դպրոցը չի ծավալում: Կառավարման խորհուրդը և ծնողխորհուրդը բաղկացած են 9-ական անդամներից, աշակերտական խորհուրդը՝ 14 անդամից: Կառավարման և խորհրդակցական մարմինները դպրոցի հիմնախնդիրները օրակարգային հարց դարձնելուց առաջ քննարկել և համագործակցել են տնօրենի հետ: Դպրոցի տարեկան բյուջեն 2022 թվականին կազմել է 41.870.700 ՀՀ դրամ, իսկ 2023 թվականին՝ 63.605.000 ՀՀ դրամ: Դպրոցն արտաբյուջետային ֆինանսական միջոցներ չունի: Ուսումնական նպատակով՝ նշված բյուջեից կատարվել է ուսուցիչների պարտադիր հերթական ատեստավորման փոխհատուցում, իսկ մինչ այդ՝ 2018-2022 թթ.-ների, հերթական ատեստավորման գործընթացը դադարեցված է եղել. 2022 թ.՝ 72000 դրամ, 2023 թ.՝ 192000 դրամ: Պարտադիր ատեստավորումը նպաստել է ՀՊՉ-ի նոր պահանջներով դասավանդման արդյունավետությանը:

Ամուր է կապը ծնողական համայնքի և կրթության կառավարման մարմինների հետ: ՏԻՄ-ը աջակցել է դպրոցին փոխադրամիջոցի հարցում, որը ներկայումս չի գործում: Դպրոցի նյութատեխնիկական բազան այս պահին հարուստ չէ: Համակարգչային դասասենյակը պատրաստ է շահագործման 10 համակարգչով: Դպրոցն ունի 1 պրոյեկտոր: Ներկայումս վերանորոգվում է դպրոցի մարզադահլիճի հատակը, հանդերձարանների և սանհանգույցների վերանորոգումն ավարտվել է:

3-րդ մասնաշենքի 1-ին հարկում Կրթական ծրագրերի կենտրոնը բացել է նախակրթարան՝ 1 խմբասենյակով, վերանորոգման աշխատանքներն ավարտվել են, և նախակրթարանի բացումը տեղի է ունեցել: Դպրոցում գործում է խոհանոց-ճաշարան՝ 50 սովորողի համար: Առարկայական կաթինետներ և գործող լաբորատորիաներ չկան:

1.1 ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ դպրոցի՝ մինչև 2028թ.-ի տեսլականի՝ տարրական և հիմնական կրթությունը պետք է հնարավորություն տա սովորողին ձեռք բերելու գրագիտություն, թվաբանության, ստեղծագործականության, հաղորդակցման հմտություններ: Սովորողը պետք է հաճույք ստանա սովորելուց, և դպրոցը պետք է զարգացնի ցանկություն կրթությունը շարունակական դարձնելու: Նաև պետք է զարգացնի կարողություն քննադատական մտածողության և տրամաբանական դատողությունների, գնահատելու և հարգելու արժանապատիվ աշխատանքի կարևորությունը, զարգացնի ցանկալի սոցիալական չափանիշներ, բարոյական և կրոնական արժեքներ, վերածի սովորողին ինքնուրույն, կարգապահ, ֆիզիկապես պատրաստված և առողջ մարդու, զարգացնի

գեղագիտական արժեքներ, սերմանի գնահատանք սեփական և այլոց մշակույթների, իրազեկի շրջակա միջավայրի մասին: Սովորողը պետք է տեղեկացված լինի այլ ազգերի և միջազգային հանրության մասին, տաժի հարգանք և սեր սեփական երկրի նկատմամբ, օժտվի ներդաշնակ համակեցության կարողությամբ, զարգացնի անհատական տաղանդները, ունենա սոցիալական պատասխանատվություն, կարողություն ճիշտ օգտագործելու հանգստի ժամանակը: Դպրոցը նաև պետք է զարգացնի տեխնոլոգիաների դերը ազգային զարգացման մեջ կարևորելու գիտակցություն:

Կառավարման նպատակն է բացահայտել սովորողների կրթական կարիքները, մշակել ու արդյունավետ կիրառել այդ կրթական կարիքները բավարարող ճանապարհային քարտեզը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքները՝ սովորողների կրթական կարիքների բավարարման բուն գործընթացը, իրականացվում են ուսուցչամանկավարժական անձնակազմի կողմից՝ ընդգրկելով ինչպես բուն ուսումնական պրոցեսը, այնպես էլ հարակից սոցիալական և մարզամշակութային միջոցառումները, առանձին սեմինար-քննարկումներն ամենատարբեր հարցերի շուրջ:

Վարչատնտեսական գործունեությունն ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպման համար նպաստավոր միջավայրի պահպանմանն ու զարգացմանը՝ ըստ դպրոցի իրական հնարավորությունների:

ա) Կառավարում

- ուշադրություն տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը, որպեսզի բարձրացվի արդյունավետությունը տարբեր գործողությունների, ինչպիսիք են տվյալների բազայի կառավարումը, սովորողների, անձնակազմի և ֆինանսական տվյալների որոնումը, ներքին և արտաքին տվյալների վերլուծությունը, պլանների ձևավորումը, նորությունների հանրայնացումը, հետադարձ կապի և առաջարկությունների մասին տեղեկացվածությունը, դպրոց-գերատեսչություն, դպրոց-համայնք, դպրոց-բուհ, դպրոց-մշակութային հաստատություններ, դպրոց-դպրոց հաղորդակցությունը՝ օգուտ բերելու դպրոցներին, ծնողներին և աշակերտներին:
- դպրոցի զարգացում որպես սովորող կազմակերպություն՝ զարգացնելու ոգևորությունը թիմային ուսուցումը խթանելու, անձնակազմի միջև փորձի փոխանակումը թույլ տալու, համակարգված մտածողությունը ամրապնդելու, հայեցակարգային շրջանակներ ձևավորելու, տրամաբանական մտածողության, վերլուծական կարողությունների և ստեղծագործական կարողությունների զարգացման համար:
- կայուն առաջնորդություն, պատրաստ լինել փոփոխությունների ցանկացած ազդեցության, խթանել կազմակերպչական անձեռնմխելիությունը ցանկացած հանգամանքներում, արդյունավետություն, բարոյականություն, ինքնատիրապետում, մարդու կառավարման, աշխատանքի կառավարման պրակտիկա, բյուջեի ճիշտ բաշխում:
- բյուջեների պատշաճ օգտագործման ռազմավարության մշակում՝ առավելագույն օգուտների համար, և պլանի վերանայում՝ հիմնված արդյունքների վրա, առաջադրանքների հանձնարարում՝ հաշվի առնելով անձնակազմի կարողությունները, ռազմավարությունների և անձնակազմի գործողությունների վերահսկում և գնահատում, համեմատում կատարողականի և չափանիշների՝ որոշելու կատարողականի աստիճանը, տարեկան գործողությունների ծրագրի կազմում՝ ըստ դպրոցների զարգացման ծրագրի:
- ուշադրություն այն գործողությունների արդյունքներին, որոնք միտված են զարգացնելու սովորողների բնութագրերը, որպեսզի սերմանվի ցանկություն բարելավելու գիտելիքներն ու հմտությունները, և զարգացվի դրական վերաբերմունք դպրոցների նկատմամբ, մանկավարժական մեթոդների փոփոխություն՝ բարելավելու ուսման ձեռքբերումը:

- իրազեկվածության զգացում, պրակտիկայի կիրառում, դրա՝ պատշաճ մշակույթի փոխակերպում՝ նպաստելու սերնդեսերունդ ժառանգմանը, տրանսֆորմացիոն մշակույթների ձևավորում՝ նվազեցնելով մեխանիկական աշխատանքը՝ թույլ տալու ավելի շատ աշխատանքային ճկունություն, հարմարվողականություն փոփոխություններին և մարտահրավերներին:

բ) Ուսումնադաստիարակչական աշխատանքներ

- զարգացնել և սերմանել տեսական՝ հանրակրթական պետական չափորոշի պահանջներին համապատասխան,
- ստեղծել շարունակական ուսուցման այնպիսի հնարավորություններ ամբողջ անձնակազմի համար, ինչպիսիք են սեմինարները, վերինարներն ու վերապատրաստումները
- խթանել թիմային ուսուցումը և համագործակցությունը դպրոցական ողջ անձնակազմի միջև
- ձևավորել հետազոտության և նորարարության մշակույթ՝ ուսուցման բարձր որակի և արդյունավետության ապահովման համար
- ներդնել գիտելիքների փոխանակման համակարգերի
- սովորել արտաքին միջավայրից՝ աշխատանքի կազմակերպումը համապատասխանեցնելով հանրակրթական պետական չափորոշիչներին
- բարձրացնել բոլոր սովորողների ուսումնառության արդյունքները՝ ստեղծելով համատեղ և ներառական կրթության տեսական յուրաքանչյուր սովորողի համար՝ անկախ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներից, մշակութային բազմազանությունից
- ապահովել ուսումնառության արդյունքների լայն շրջանակ՝ ներառող ներկան ու ապագան
- ոգեշնչել և մոտիվացնել
- հրավիրել աշակերտներին, ծնողներին, համայնքին և այլ գործընկերներին՝ նպաստելու դպրոցի սոցիալ-մշակութային միջոցառումների իրագործմանը
- ապահովել ամբողջ անձնակազմի ակտիվ սոցիալականացումը
- ներգրավել նոր անձնակազմին և տրամադրել մենթորական աջակցություն
- անձնակազմի լիարժեք ներգրավում սեփական մասնագիտական նպատակների և առաջնահերթությունների բացահայտման գործընթացում՝ կազմակերպելով արտադասարանական աշխատանքներ, ինչպիսիք են ուսումնական նախագծերն ու խմբակները
- մասնագիտական ուսուցում՝ հիմնված գնահատանքի և հետադարձ կապի վրա
- ժամանակի և այլ ռեսուրսների տրամադրում մասնագիտական ուսուցումը աջակցելու համար

գ) Վարչատնտեսական գործունեություն

- հաստատության վարչատնտեսական աշխատանքների արդյունավետ կազմակերպում՝ դրա գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով
- անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերում՝ ծրագրով սահմանված գործառնություններն իրականացնելու համար
- ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարում՝ ըստ նպատակի
- որակյալ գույքի ապահովում և պարբերաբար արդիականացում, ենթակառուցվածքների համալրում, բարեկարգում՝ ուսումնական ֆիզիկական միջավայրի լիարժեք կիրառականությունն ապահովելու նպատակով

2. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻՆ. ՀԱՄԱՅՆՔԻ, ՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՀՀ Արագածոտն մարզի Մուղնու Մ.Աշոցի անվան հիմնական դպրոցը գտնվում է Արագածոտն մարզի Աշտարակ համայնքում, ուր երեխաների կրթությունն ու դաստիարակությունը հիմնականում կազմակերպվում է պետության կրթական քաղաքականության միտումներին համապատասխան («Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, հոդված 5):

Պարտադիր կրթության երկրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին և երկրորդ աստիճանները («Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 1):

Հիմնական դպրոցի գործունեությունը իր սովորողներին ազգային հենքի վրա տարրական և հիմնական որակյալ կրթություն տալն է՝ ապահովելով ձևավորումը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների, որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում: Մեր օրերում և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես՝ որակյալ կրթությունը և դաստիարակությունը, շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Դպրոցում չեն իրականացվում կրոնական քարոզչություն և քաղաքական գործունեություն: Յուրաքանչյուր սովորողի համար կազմակերպվող կրթությունը հիմնականում նպատակաուղղված է նրա՝

- մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը,
- մարդկային արժանապատվության պահպանմանը,
- իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը,
- ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը,
- մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը,
- ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը,
- որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

ՀՀ Արագածոտնի մարզի Մուղնու Մ. Աշոցի անվան հիմնական դպրոցի գործունեության ընթացքում նախատեսում են ստեղծել, իրականացնել և կատարելագործել վարչական, ուսումնադաստիարակչական, մեթոդական՝ ավանդական և նորարարական լավագույն մշակույթ՝ համագործակցելով հետևյալ խմբերի հետ՝

ա) ծնողական համայնք

- ծնողական ժողովների, ծնողխորհուրդների կազմակերպում՝ ըստ կարգի,
- հանդիպումների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպում՝ դպրոցի գործունեության վիճակի, հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական

աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերի, ծնողավարության հիմունքների քննարկման համար,

- կազմակերպել միջոցառումներ, սեմինարներ հոգեբանների, մանկավարժների հաղորդմամբ՝ ծնող-դպրոց փոխհարաբերության ակտիվ, օգտակար, նպատակային լինելու մասին:

բ) կառավարման և դեկավարման մարմիններ

- համագործակցել և ապահովել ուսուցիչների և աշակերտների տեղեկացվածությունը և մասնակցությունը «ԿԶՆԱԿ» հիմնադրամի (և ոչ միայն) կողմից կազմակերպվող վերապատրաստումներին, մրցույթներին, ծրագրերին,
- տեղեկացված լինել և կիրառել կառավարության, ԿԳՄՍ նախարարության կողմից տրվող գործող օրենքները, հրամանները, կարգերը,
- ակտիվություն դրսևորել լիազոր մարմնի հրահանգների, կարգադրությունների կատարման գործում՝ հետևելով պետության կրթական քաղաքականության միտումներին:

գ) համայնքային հասարակության ակտիվ խմբեր

- դաստիարակել համայնքային և ժողովրդավարական առաջադեմ գաղափարներ ու մոտեցումներ ունեցող սովորողներ, որոնք իրենց սովորածը կկիրառեն ոչ միայն իրենց կյանքում, այլև համայնքին նպաստ բերող նախաձեռնություններում,
- կազմակերպել հանդիպումներ, լսումներ տեղական ինքնակառավարման աշխատակազմի, երիտասարդ մասնագետների, ակտիվ շրջանավարտների հետ,
- նպաստել անձնակազմի, մանկավարժների և աշակերտների շրջանում համայնքային կառավարման, խնդիրների վերհանման, համայնքային ծրագրերի մշակման, իրագործման և վերահսկման գիտելիք և հմտություն ձեռք բերելուն:

Մուղնու Մ. Աշոյանի անվան հիմնական դպրոցի գործունեության ձևավորման համար հաշվի են առնվել դպրոցի մանկավարժների, սովորողների և ծնողների առաջարկությունները, կարծիքները:

3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ և ՆԵՐՈՒԺԻՆ

Ենթակառուցվածքներ			
Անվանում	Հնարավորությունները		Փաստացի վիճակը
Ջրամատակարարում	շուրջօրյա		լավ
Կոյուղացում	կենտրոնացված		բավարար
Էլեկտրամատակարարում	շուրջօրյա		բավարար
Ջեռուցում	կենտրոնացված		լավ
Սանհանգույցներ	8	1-ին հարկում՝ 4	բավարար
		2-րդ հարկում՝ 4	բավարար
Ինտերնետային կապ	բավարար՝ հարմոնիա		բավարար
Ուսումնական նպատակով ֆիզիկական հարմարեցումներ			
Անվանում	Քանակ/չափ	Փաստացի վիճակը	

Ճաշարան	1	լավ
Նախակրթարան	1	լավ
Գրադարան	1	բավարար
Համակարգչային սենյակ	1	բավարար
ՆԶՊ -ի կաբինետ	1	լավ
Մարզադահլիճ	1	լավ
Մարզահրապարակ	1	բավարար
Դասասենյակ	17,12-ը՝գործող/	բավարար
Ուսուցչանոց	1	բավարար
Առանձնասենյակ	4	բավարար
Հանդերձարան	1	բավարար
Ապաստարան	1	անբավարար
Նկուղ	1	անբավարար

Մարդկային ռեսուրսներ	
Անվանում	Քանակ
Տնօրեն	1
Տնօրենի տեղակալ	1
ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	1
ԴԱՀ	1
Ուսուցչի օգնական	1
Հոգեբան	1
Վարչատնտեսական համակարգող	1
Գլխավոր հաշվապահ	1
Զինղեկ	1
Գրադարանավար	1
Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ	1
Անձնակազմի կառավարման մասնագետ	1
Ուսուցիչներ	21
Դպրոցի խորհրդի անդամներ	9
Մանկավարժական խորհրդի անդամներ	25
Աշակերտական խորհրդի անդամներ	14
Բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչներ	21
Հիմնական ուսուցիչներ	21
Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ	2
Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ	9
Աշխատողների ընդհանուր թիվը	40
Աշակերտներ	126

Տվյալներ ուսումնական հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ՝

Պաշտոնը	ԱԱՀ	Պաշտոնավարման	Հաստատությունում	Պետական պարգևներ, կոչումներ և այլն
---------	-----	---------------	------------------	------------------------------------

		Ժամանակ ահատված ը	աշխատելո ւ Ժամանակ ահատված ը	
Տնօրենի պարտականությունները կատարող	Գայանե Ավետիսյան	6 ամիս		
Տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով	Գայանե Ավետիսյան	38 տարի	38 տարի	ՀՀ Արագածոտնի մարզպետի պատվոգիր ՀՀ ՊՆ
Տնօրենի տեղակալ մասնագիտացվա ծ կրթական աշակցություններ ի գծով	Արամայիս Ղազարյան	1 ամիս	30 տարի	
Հաշվապահ	Ծահանե Աբրահամյան		17 տարի	

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորների քանակը (դրույքը)
Տնօրեն	1
Տեղակալ ուսումնական գծով	0.75
Վարչատնտեսական մասի համակարգող	1
Հաշվապահ	1
Տնտեսվար	1
Ընդամենը	4
Զինդեկ	1 (30% հավելում քաղաքաշտպանություն)
Գրադարանավար	1
Հոգեբան	0.75
Գլխավոր հաշվապահ	1
Ուսուցչի օգնական	1
Դաստիարակչական աշխատանքների համակարգող	0.75
Էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետ	0.75
Անձնակազմի կառավարման մասնագետ	1
Ընդհանուր նորոգող և սպասարկման մասնագետներ (էլեկտրագետ, սանտեխնիկ, փականակազործ)	0.75
Հնոցապան	2
Պահակ	4
Հավաքարար	1.8

Բակի հավաքարար	1
Խոհարար	0.5
Մասնագետ՝ ջեռուցման համակարգի սպասարկման գծով	0.5
Ընդամենը	21.8

Հաստատության գրադարանը	
Ցուցանիշ	Տվյալներ
Գրադարանի տարածքը քմ-ով	54 քմ.
Գրադարանում համակարգիչների թիվը	1
Գրադարանում ինտերնետին միացված համակարգիչների թիվը	
Գրադարանում կամ ընթերցասրահում նստատեղերի թիվը	4
Գրադարանային ֆոնդում առկա գրքերի /բացառել ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերը/ ընդհանուր թիվը, այդ թվում՝	
-գեղարվեստական գրքերի թիվը	
-տեղեկատվական գրքերի թիվը /քառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն/	
-ուսումնամեթոդական գրքերի թիվը	
-ամսագրերի թիվը	
-այլ	
Վերջին անգամ գրադարանային ֆոնդը նոր գրականությամբ համալրվելու ամսաթիվը	
Ամենից հաճախ գրադարանից վերցվող գրքերը	
Գրադարանից միջինում ամսական օգտվողների թիվը	

Գրադարանը բավականաչափ հագեցած է գրականությամբ, սակայն չունի համակարգչային, թվայնացված ֆոնդ, ինչպես նաև ժամանակակից այլ տեխնիջոցներ:

4. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Հաստատության գործունեության վերլուծության համար հիմք են ծառայել նախորդ ուսումնական տարիների ներքին գնահատման արդյունքները, հարցումները, շենքային և ռեսուրսային պայմանների դիտարկումը, դպրոցի ինտերնետային կայքի ուսումնասիրությունը:

4.1 ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Դպրոցի շենքը տիպային է, կազմված է 3 մասնաշենքից, երկհարկանի է, մուտքերի թիվը՝ 1 մուտք, 2 ելք: Դպրոցի շենքի շահագործումը մասամբ համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին: Դպրոցը հիմնադրվել է 1979 թվականին՝ 8-ամյա կրթություն իրականացնելու համար, սակայն իրականացնում է 9-ամյա կրթություն: Դպրոցի շենքը մասամբ վերանորոգված է, ունի հիմնանորոգման կարիք: Տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար: Իրականացվում է համընդհանուր, շուրջօրյա ջեռուցում (բնական գազ):

Դպրոցի շենքը մասամբ հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ) ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին (թեք հարթակներ, լայն դռներ և այլն):

Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան կրթական միջավայրը պատկերացնել առանց անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի անհնար է: Ուսումնական հաստատության զարգացման մեջ առաջնահերթություններից է ուսումնական կրթական բազայի համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին: Դպրոցը բավարար չափով ապահովված է անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
• Շենքային պայմաններ • Դասարաններ՝ 1-9-րդ, կահավորում՝ բավարար • Տանիք, պատուհաններ, ասֆալտապատ բակ, ցանկապատ • Կոյուղի, ջրագիծ, սանհանգույցներ՝ 4 • Լոկալ ջեռուցման համակարգ • Ճաշարան 1 • Նախակրթարան 1 • Գրադարան 1 • Մարզադահլիճ 1 • Բացօթյա սպորտհրապարակ 1 • Ուսուցչանոց 1 • Համակարգչային դասասենյակ 1՝ համալրված 5 համակարգիչներով, պրոյեկտոր՝ 1, տպիչ՝ 2 • ՆՉՊ սենյակ 1 • Ապաստարան 1 • Նկուղ 1 • Միջանցքների հատակները սայթաքուն չեն • Դպրոցի կահույքը հիմնականում համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է • Դպրոցում մշակված և առկա է սովորողների ու անձնակազմի տարիանման պլան	• Լաբորատորիաներ, լաբորատոր սարքավորումներ, նյութեր • Բուֆետ • Սենյակներ, արհեստանոցներ • Գույքով ապահովվածություն, դասարանների գույքի մաշվածություն • Հանդիսությունների դահլիճ • Դպրոցի մարզադաշտում անհրաժեշտ մարզական կահավորանքի և պարագաների բացակայություն • Ընթերցասրահի կահավորանքի բացակայություն • Դպրոցը հագեցած չէ ժամանակակից արդի ծրագրեր ունեցող տեխնիկայով և համակարգիչներով, էլեկտրոնային գրքերի ընթերցանության հնարավորության բացակայություն • Ինտերնետ կապի ամբողջական ապահովվածություն • Թեքահարթակների բացակայություն 2-րդ հարկում • Պատերի հենաձողերի բացակայություն ամբողջ տարածքում

• Դպրոցի նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցադրանքով • Դպրոցի տարածքը մաքուր է, իսկ օգտագործվող աղբը կանոնավոր հավաքվում է հատուկ աղբարկղներում և դուրս է բերվում հաստատության տարածքից • Դպրոցն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից • Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին • Դպրոցը ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով • Դպրոցի շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր • Դպրոցի տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով • Դպրոցի կահույքը գերծ է ծաղկամաններից, նկարներից, դեկորատիվ իրերից • Դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում է առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին • Դպրոցում սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին • Դասասենյակներում սեղան նստարանները դասավորված են շարքերով՝ ուսման պրոցեսում դեպի գրատախտակ սովորողների հարմարավետությունն ապահովվելու նպատակով	
---	--

Դպրոցի սովորողները «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացները անցկացնում են մարզադաշտում մինչև մարզադահլիճի վերանորոգումը	
---	--

Դպրոցի շենքը և հարմարությունները	
Տվյալ շենքում դպրոցի տեղակայման թիվը	1979
Հարկայնությունը	2
Ծենքի ընդհանուր մակերեսը	2590 քառ.մ
Մասնաշենքեր	3
1-ին հարկի մակերեսը	1295
2-րդ հարկի մակերեսը	1295
Դպրոցին կից տարածքի մակերեսը	1625 հեկտար
Հեռավորությունը ամենամոտ դպրոցից (մոտակա բանուկ ճանապարհով)	3 կմ

Տարածքների անվանումը		
Անվանումը		Ընդհանուր մակերեսը, քառ.մ
Ճաշարան		120 քմ.
Նախակրթարան		120 քմ
Գրադարան		54 քմ.
Համակարգչային սենյակ		25 քմ.
ՆՉՊ-ի կաբինետ		40 քմ.
Մարզադահլիճ		120 քմ.
Մարզահրապարակ		320 քմ.
Առանձնասենյակ / 4 /		90 քմ.
Ապաստարան		120 քմ.
Նկուղ		80 քմ.
Կիսանկուղ		40 քմ.
Սանհանգույց		140 քմ.
Ուսուցչանոց		15 քմ.
Դասասենյակներ		1270 քմ.
Շահագործվող ՀՄ-ներ		
Անվանում	Քանակ/չափ	Պահանջարկ
Աշակերտական սեղան	113	ձեռք բերել 10 հատ
Աշակերտական աթոռ	183	ձեռք բերել 12 հատ
Գրատախտակ	22	
Պահարան	27	

Ուսուցչի սեղան	14	
Ուսուցչի աթոռ	7	
ՏՀՏ սարքավորումներ		
Անվանում	Քանակ/չափ	Պահանջարկ
Համակարգիչ	10	3
Տախչ	2	1
Պրոյեկտոր	1	

Վերահսկողության մեխանիզմներ՝		Վերահսկող՝		Հաշվետվության ձևեր՝		
- Մշտադիտարկում - Վերանայում և հստակեցում - Շարունակական բարելավում		- Տնօրենություն - Համակարգող		- Ներքին գնահատում - ՈւԴԱ		
		5(գերազանց)	4(շատ լավ)	3(բավարար)	2(վատ)	1 (անբավարար)
		√	√	√	√	√
1	Հաստատության շենքի և տարածքի անվտանգ շահագործումը		√			
2	Ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավումը			√		
3	Սովորողների անվտանգ, բարեկարգ միջավայրի ձևավորումը		√			
4	Նյութատեխնիկական գույքի ձեռքբերումը		√			

4.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը հաստատության խորհուրդն է, որի գործառույթներն ամրագրված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում և ուսումնական հաստատության կանոնադրության մեջ:

Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման խորհուրդ: Կառավարման խորհուրդը բաղկացած է 9 անդամից: Տնօրենը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
- Կառավարման խորհուրդը մշտապես գործում է դպրոցի կանոնադրությամբ և սահմանված կարգով՝ իրեն վերապահված գործառույթներին համապատասխան - Կառավարման խորհուրդը ապահովում է վերահսկողություն և պատասխանատվություն է կրում տնօրենին դպրոցի արդյունավետ	- Կառավարման խորհուրդը և տնօրենը ունեն տարբեր տեսական և ընդհանուր նպատակներ դպրոցի համար - Կառավարման խորհրդի և տնօրենի միջև անբավարար հաղորդակցությունը հանգեցնում է
կառավարման համար՝ ապահովելով քաղաքականության և կանոնակարգերի հավատարմությունը - Քննարկում է ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները - Հրավիրվում են նիստեր, նիստերն արձանագրվում են - ԿԽ որոշումներ - Կառավարման խորհրդի և տնօրենի համագործակցության դրական մթնոլորտ - Հաստատում է կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները - Փինանսական առաջարկությունները ընդունվում են և աջակցվում - Աջակցում է բոլոր նախաձեռնություններին - Քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները - Տնօրենի ներկայացմամբ լսում և հավանություն է տալիս զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությանը	որոշումների կայացման հետաձգմանը, գործողությունների ոչ ճիշտ դասակարգմանը - Կառավարման խորհրդի կողմից ինքնուրույն նախաձեռնությունների պակաս - Կառավարման խորհրդի նիստերին որոշ անդամների բացակայություններ - Խորհրդի որոշ անդամների կողմից պասիվ, ձեռնպահ վերաբերմունք - Կառավարման խորհրդի անդամների կողմից ներքին իրավական ակտերի իմացության ցածր մակարդակ - Կառավարման խորհրդի անդամների միջև համագործակցության պակաս

• Տնօրենի ներկայացմամբ հաստատում է կարգի համաձայն տնօրենի կողմից մշակված՝ ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը • Այլ կառուցվածքային և պարտադիր գործառնության երաշխավորված փաստաթղթերի օրինակելի վարում, հաստատության տնօրենը աջակցում է հաստատության կառավարման մարմնի աշխատանքներին	
--	--

Տվյալներ ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ՝

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը, գրադեցրած պաշտոնը	Կրթությունը	Հաստատության խորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
1.Քնարիկ Մարտիրոսյան	Մարգպետարան	բարձրագույն	2021թ.-ից	
2.Շանթ Վահանյան	Քաղաքապետարան	բարձրագույն	2021թ.-ից	
3.Մարինե Սարգսյան	Քաղաքապետարան	բարձրագույն	2021թ.-ից	
4.Մարինե Ատոմյան	Մարգպետարան	բարձրագույն	2021թ.-ից	
5.Հովհաննես Ասատրյան	Մարգպետարան	բարձրագույն	2021թ.-ից	
6.Էսմերալդա Ղազարյան	Դպրոց	բարձրագույն	2023թ.-ից	
7.Ռուզաննա Հայրապետյան	Դպրոց	բարձրագույն	2021թ.-ից	
8.Շահանե Աբրահամյան	Ծնող	մ/մ	2021թ.-ից	
9.Ռուզաննա Հովհաննիսյան	Ծնող	մ/մ	2021թ.-ից	

Խորհրդի աշխատանքը բավարար է, սակայն ցանկալի է ակտիվացնել նրա ներգրավվածությունը ուսումնական հաստատության աշխատանքների բարելավման ուղղությամբ:

Վերահսկողության մեխանիզմներ՝		Վերահսկող՝		Հաշվետվության ձևեր՝		
- Մշտադիտարկում - Հետադարձ կապ - Վերանայում և հստակեցում		- Տնօրենություն - Կառավարման խորհուրդ		- Ներքին գնահատում - ՈւԴԱ - Նիստերի արձանագրություններ		
		5(գերազանց)	4(շատ լավ)	3(բավարար)	2(վատ)	1 (անբավարար)
		√	√	√	√	√
1	Կառավարման խորհրդի և տնօրենի համագործակցությունը		√			
2	Կառավարման խորհրդի անդամների մասնակցությունը և ներգրավվածությունը			√		
3	Դպրոցի թափանցիկ և արդյունավետ կառավարումը		√			
4	Նիստերի կազմակերպումը, տնօրենի մասնակցությունը կառավարման խորհրդի նիստերին		√			

4.3 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Դպրոցում ձևավորվել և գործում են դպրոցի կառավարման խորհուրդը, մանկավարժական խորհուրդը, առարկայական մեթոդական միավորումները, ծնողական և աշակերտական խորհուրդները: Ծնողական և աշակերտական խորհուրդները արդյունավետ են գործում:

Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն, աշխատանքային պլաններ, գործում են օրենքով նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:

Դպրոցը համագործակցում է և՛ կառավարման, և՛ խորհրդակցական մարմինների հետ:

Դպրոցի գործունեությունը լիարժեք և արդյունավետ կազմակերպելու համար շատ կարևոր է բոլոր մարմինների համագործակցված և բարեխիղճ աշխատանքը

Կառավարման խորհուրդը բաղկացած է 9 անդամներից: Օրենքով նախատեսված պարբերականությամբ հրավիրվում են նիստեր: Խորհուրդը գործում է կանոնադրական իր լիազորությունների շրջանակներում: Դպրոցի գործունեությունը թափանցիկ դարձնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման խորհրդի դերը:

Մանկավարժական խորհուրդը պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառնությունները, հիմնականում գումարվում է բոլոր անդամների մասնակցությամբ, անդրադառնում է ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար: Մանկավարժական խորհրդի նիստերը արձանագրվում են արձանագրությունների մատյանում:

Մանկավարժական խորհրդի անդամների համար կկազմակերպվեն սեմինարներ, վերապատրաստումներ, կոնֆերանսներ ոչ միայն հանրակրթական դպրոցի հիմնարար փաստաթղթերին ծանոթացնելու նպատակով, այլև ինքնակրթվելու և ժամանակի պահանջներին համապատասխան կրթություն կազմակերպելու համար:

Աշակերտական խորհուրդ. դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն է, որը ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան: Աշակերտական խորհուրդում ընդգրկված են 14 սովորողներ:

Ծնողական խորհուրդ. սովորողների կրթության զարգացման գործում զգալի ներդրում ունեն ծնողները: Ամենօրյա աշխատանքի արդյունքում անհրաժեշտ է ձեռք բերել փոխադարձ վստահություն: Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառնություններում: Ծնողական խորհուրդը կազմված է 9 անդամից:

Առաջիկայում ակնկալվում է ծնողխորհրդի աշխատանքների ակտիվացում՝ մանկավարժական և աշակերտական խորհրդների հետ առավել սերտ համագործակցելու միջոցով:

Առարկայական մեթոդական միավորումներ. դպրոցում գործում են 3 առարկայական մեթոդական միավորումներ՝ «Տարրական կրթություն», «Բնագիտամաթեմատիկական և հարակից այլ առարկաներ», «Լեզուներ և հասարակական այլ առարկաներ»: Ուսումնական տարվա ընթացքում, ըստ տարեկան աշխատանքային ծրագրի, գումարվում են մեթոդմիավորումների նիստեր: Նիստերը արձանագրվում են արձանագրությունների մատյանում:

Կզարգացվի և կհարստացվի առարկայական մեթոդական միավորումների մեթոդական աշխատանքի կազմակերպման զինանոցը՝ գործող փորձի ուսումնասիրության միջոցով, առարկայական մեթոդական միավորումների համար նախատեսված վերապատրաստումների միջոցով:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
- ԿԽ և ՄԽ որոշումներ - ԾԽ և ԱԽ որոշումներ - Մ/Մ որոշումներ - Խորհուրդների արձանագրություններ - Մանկավարժական խորհուրդը քննարկում է՝ հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական	- Դասի վարմանը ծնողի ներգրավվածության պակասը - Համադպրոցական հայրենագիտական և ճանաչողական ուսումնական էքսկուրսիաների կազմակերպում

պլանների նախագծերը, ինչպես նաև նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները • Քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը • Քննարկում է ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակին առնչվող հարցեր • Կոլեգյալ կառավարման մարմնի բարելավող աշխատանք • Ձևավորված մեթոդական միավորումներ • Մեթոդական միավորումների համակարգված աշխատանք • Բավարար փաստաթղթաշրջանառություն • Ծնողական խորհուրդը լսում է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին, անում է առաջարկներ • Ծնողական խորհուրդը ծնողներին ներգրավում է սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում • Ծնողական խորհրդի աջակցությունը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին • Գումարվում են առարկայական ՄՄ կանոնավոր նիստեր	• Ծրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդներ • Խորհրդակցական մարմինների կողմից իրենց գործառնությունների հստակ իրականացման, կանոնակարգման, միմյանց միջև արդյունավետ համագործակցության պակաս • Խորհրդակցական մարմինների անդամների՝ միմյանց միջև ակտիվ ու արդյունավետ համագործակցության պակաս • Աշակերտական խորհուրդի իրազեկվածության և նախաձեռնությունների պակաս • Միջդպրոցական մեթոդմիավորումների համագործակցություն • Ծնողների ներգրավվածությունը մեծ չէ ուսումնական գործընթացին և ներդպրոցական վերահսկողությանը • Զիչ են համագործակցում հասարակական կազմակերպությունների հետ • Ծնողական խորհրդի կողմից նախաձեռնությունների պակաս • Երկարօրյա ուսուցման կազմակերպական աշխատանքներին պասիվ համագործակցություն /ծնողական նախաձեռնության բացակայություն/ • Հավելյալ ֆինանսական միջոցների ուղղորդման բացակայություն համապատասխան օղակներում
• Ծնողական խորհրդի անդամների կանոնավոր հաճախում ժողովներին և մասնակցություն նիստերին • Ծնողները կազմակերպում են ուսումնական և ճանաչողական էքսկուրսիաներ • Հաստատության գործունեության թափանցիկություն • Աշակերտական խորհուրդը մասնակցում է դպրոցի կյանքին, դառնում միջոցառումների հեղինակ, մասնակցում է հասարակական և կամավորական աշխատանքների	Դպրոցի ծնողական և աշակերտական խորհուրդ-համայնք կապի պասիվություն

Վերահսկողության մեխանիզմներ՝ • Մշտադիտարկում • Հետադարձ կապ • Վերանայում և հստակեցում • Շարունակական բարելավում		Վերահսկող՝ • Տնօրենություն		Հաշվետվության ձևեր՝ • Ներքին գնահատում • ՈւՌԱ • Խորհուրդների նիստերի արձանագրություններ		
		5(գերազանց)	4(շատ լավ)	3(բավարար)	2(վատ)	1 (անբավարար)
		√	√	√	√	√
1	Տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների համագործակցությունը		√			
2	Կառավարման և խորհրդակցության մարմինների գործունեությունը		√			
3	Ուսուցման արդյունավետության բարձրացումը			√		
4	Ծնողական և աշակերտական խորհուրդների ներգրավվածությունը			√		
5	Համագործակցությունը ի շահ կրթական բարենպաստ միջավայրի ապահովմանը		√			

4.4 ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Թեև երբեմն կարող է վախեցնել աշակերտներին, սակայն դպրոցի կազմակերպական աշխատանքներում ներգրավվածությունը կարևոր է կրթությունից առավելագույն օգուտ քաղելու համար: Մասնակցությունն ակտիվորեն ներգրավում է սովորողներին նաև ուսումնական առարկաների մեջ՝ խրախուսելով նրանց զարգացնելու գաղափարներն ու ձևավորելու սեփական դիրքորոշումն արտահայտելու վստահություն :

Դպրոցական աշխատանքներում ներգրավվածությունն օգնում է ուսանողներին ավելի լավ սովորել:

Դպրոցի աշակերտական համակազմի հետ աշխատելիս կարևորում են նրանց ըմբռնումը բարելավելու, քննադատական մտածողության հմտությունները զարգացնելու, վստահությունը բարձրագնելու, հաղորդակցման հմտությունները զարգացնելու, թիմային աշխատանքները խթանելու ներգրավվածությունը բարձրացնելու, հետադարձ կապն ապահովելու գործոնները:

Աշակերտական համակագմը ակտիվ մասնակցություն կունենա ԿԳՄՍ-ի, ԿԶՆԱԿ-ի, կրթական տարբեր հիմնադրամների կողմից կազմակերպվող միջոցառումներին, համաժողովներին, մրցույթներին, նախագծերին:


Ուժեղ կողմ	Թույլ կողմ
- Սովորողները ստանում են հանրակրթության պետական կրթական չափորոշիչն համապատասխան կրթություն - Դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցում են ուսումնական հաստատության կառավարմանը - Ազատ արտահայտում են սեփական կարծիքն ու համոզմունքները - Անվճար օգտվում են դպրոցի ուսումնականության բազայից - Հանախում և մասնակցում են ուսումնական պարապմունքներին - Պաշտպանված են ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից - Ակտիվ մասնակցությունը արտադասարանական միջոցառումներին - Մասնակցությունը «Կենցուղում» և «Մեղու» հանրապետական մրցույթներին, առարկայական օլիմպիադաներին, աշակերտական կոնֆերանսներին - Մասնակցություն »Մերունդն եմ համայնքիս տոհմի» ուսումնական նախագծին /7-րդ դաս.սովորողներ, ուս.նախ.դեկավար՝ Դիանա Խոջոյան/ - Մասնակցությունը ստեղծագործական և սպորտային մրցույթներին - Մարզական մրցումներում հաղթանակներ /կարատե, ծանրամարտ, վոլեյբոլ, ֆուտբոլ/ 120-200 ժամ չբացակայած աշակերտներ - Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները ներառված են ուսումնադաստիարակչական գործընթացում և մշտական ու հատուկ ուշադրության կենտրոնում են մասնակավարժական համակագմի և ընկերների կողմից: - Սովորողները իրար հանդեպ ունեն հանդուրժող վերաբերմունք: - Հարգալից վերաբերմունք ուսուցիչների նկատմամբ: - Աշակերտները օգտվում են emis.am, dasaran.am, lib.armedu.am, quizizz կայքերից և դպրոցի ֆեյսբուքյան էջից	- Դասը վարում է աշակերտը - Բուհեր ընդունվելու ցածր ցուցանիշ - Մասնակցություն խմբակներում, նախագծային - աշխատանքներում - Մասնակցությունը միջազգային կամ տեղական - ծրագրերում - Մասնագիտական կողմնորոշում - Սովորողների որոշ մասի մոտ ուսման նկատմամբ - մոտիվացիայի պակաս - Նպատակասլացության բացակայություն - Մրցակցային մտածելակերպ - Ընթերցանության, ինքնակրթության նկատմամբ - նվազ հետաքրքրություն - Առարկայական օլիմպիադաների մասնակցողների - թվի նվազում - ասմունքի մրցույթներին պասիվ մասնակցություն

Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ երկու ուսումնական տարիների համար՝

Դասարանների թիվը	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
------------------	-------------------	-------------------	-------------------	---

1-ին	1	1	1	անփոփոխ
2-րդ	1	1	1	անփոփոխ
3-րդ	1	1	1	անփոփոխ
4-րդ	1	1	1	անփոփոխ
5-րդ	1	1	1	անփոփոխ
6-րդ	1	1	1	անփոփոխ
7-րդ	1	1	1	անփոփոխ
8-րդ	1	1	1	անփոփոխ
9-րդ	1	1	1	անփոփոխ
Ընդամենը				

Ընդհանուր առմամբ փոփոխություն տեղի չի ունեցել:



Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ երկու ուսումնական տարիների համար՝

Ցուցանիշը	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	83	95	94	92	նվազում
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ	83	97	96	101	աճ

Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	5	16	13	15	ան
Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը	5	9	13	7	նվազում

Թվաքանակի փոփոխման պատճառը հիմնականում տեղափոխված ընտանիքների թվի ավելացումն է համայնքում և արտագաղթը:

Վերահսկողության մեխանիզմներ`		Վերահսկող` • Տնօրենություն		Հաշվետվության • Ներքին գնահատում ձևեր`		
		5(գերազանց)	4(շատ լավ)	3(բավարար)	2(վատ)	1 (անբավարար)
		√	√	√	√	√
1	Մասնագիտական կողմնորոշում ունեցող քաղաքացու ձևավորումը					
2	Ուսումնառության որակի բարձրացումը					
3	Մրցակցող, որոշում կայացնող, կարծիքն ազատ արտահայտող աշակերտները					
4	Աշակերտների ընդգրկվածությունը միջոցառումներին, մրցույթներին					

4.5 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Մանկավարժական համակազմի առաջնային ուշադրությունը պետք է կենտրոնացված լինի ծրագրերի պլանավորման, պատրաստման և դասավանդման վրա` սովորողներին կոնկրետ արդյունքների հասցնելու նպատակով: Դասարանին ուսուցիչը ներգրավում է քննադատական մտորումների և հարցումների մեջ` բարելավելու գիտելիքներն ու հմտությունները` դասապրոցներ արդյունավետ կազմակերպելու և ուսումնառությունը բարելավելու համար:

Ուսուցիչներից ակնկալվում է`

- ունենալ բովանդակային գիտելիքներ և մանկավարժական պրակտիկա՝ բավարարելու բոլոր սովորողների բազմազան կարիքները, ապահովելու սովորողի անվտանգ միջավայր՝ կրթության անվտանգ չափանիշներին համապատասխան,
- ստեղծել օրինակելի դասասենյակային պրակտիկա և ուսուցանել դպրոցի մյուս ուսուցիչներին՝ ներգրավվելու իրենց կարողությունները ընդլայնելու գործընթացում,
- տրամադրել փորձագիտական խորհրդատվություն բովանդակության, գործընթացների և ռազմավարությունների վերաբերյալ, որոնք կձևավորեն անհատական և դպրոցական մասնագիտական ուսուցումը,
- օգնել անձնակազմին օգտագործելու ուսանողների տվյալները՝ ուսուցման այն մոտեցումները կիրառելու համար, որոնք հնարավորություն կտան հասնելու ուսանողների ուսումնառության արդյունքների բարելավման հետ կապված նպատակներին:

Լրացուցիչ պարտականությունները կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- ղեկավարել և վերահսկել ուսուցիչների թիմը ուսուցման և ուսուցման ծրագրերի պլանավորման, իրականացման և վերանայման գործում՝ համաձայն դպրոցի զարգացման ծրագրի նպատակների և առաջնահերթությունների,
- ղեկավարել ուսումնական պլանային քաղաքականության և ծրագրերի մշակումը,
- համակարգել դպրոցներում ուսումնական ծրագրերի մշակումն ու իրականացումը,
- կառավարել մասնագիտացված գործառույթներ, ինչպիսիք են սպորտը, կարիերան, սովորողների բարեկեցությունը, էքսկուրսիաները կամ ճամբարները,
- աջակցել տնօրենին, օգնականին և առաջատար ուսուցիչներին հատուկ գործառույթների կատարման հարցում:

Մանկավարժական համակազմը համալրվելու է նոր գրագետ, որակյալ, բանիմաց կադրերով: Խրախուսվելու են մանկավարժության բնագավառում հաջողություններ գրանցած ուսուցիչները: Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների կատարելագործման համար կկազմակերպվեն սեմինարներ, վերապատրաստումներ, դասընթացներ, համաժողովներ, խորհրդատվություններ, խորհրդակցություններ: Բոլոր մանկավարժները պետք է տիրապետեն իրավական փաստաթղթերի բովանդակային պահանջներին, որը շատ կարևոր է յուրաքանչյուր մանկավարժի համար:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
